

---

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
XXXVII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-  
ԱՄՅԱԿԻՆ

1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին Հայաստանում տեղի ունեցան խորհրդարանական այլընտրանքային ընտրություններ: Նորընտիր Գերագույն խորհուրդը օգոստոսի 23-ին ընդունեց «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որի համաձայն Հայկական ԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Սրանով հիմք դրվեց Հայաստանի անկախացման գործընթացին, որի արդյունքում վերջ տրվեց Հայաստանում կոմունիստական կուսակցության շուրջ 70-ամյա քաղաքական մենաստիրությանը:

Խորհրդային Միությունից անջատման և անկախության ուղին բռնած Հայաստանի Հանրապետությունում 1991 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցավ հայոց բազմադարյան պատմության ընթացքում նախադեպը չունեցող պատմական իրադարձություն՝ անկախության հանրաքվե: Քվեարկության դրված՝ «Համաձայն եմ, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս» հարցին կողմ քվեարկեց ՀՀ քաղաքացիների գերակշիռ մասը՝ 2.042.627 մարդ (քվեարկելու իրավունք ունեցողների 94,39 %-ը): ՀՀ Գերագույն խորհրդի սեպտեմբերի 23-ի նիստում պաշտոնապես ազդարարվեց սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքների մասին, և Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով անցկացված հանրաքվեն, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

Այսպես ծնունդ առավ Հայաստանի երրորդ հանրապետությունը՝ հանդիսանալով Հայաստանի առաջին (1918–1920 թթ.) և երկրորդ (խորհրդային) (1920–1991 թթ.) հանրապետությունների ժառանգորդը: Մերօրյա Հայաստանի Հանրապետությունը 1918 թ. մայիսին ստեղծված հայկական անկախ պետականության առանց ընդհատումի շարունակական գոյության իրեղեն ապացույցն է: Ուստի օրինաչափ է, որ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ կազմակերպած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հերթական՝ XXXVII գիտական նստաշրջանը նվիրված էր Հայաստանի անկախության վերականգնման 25-րդ տարեդարձին:

Գիտական նստաշրջանի բացումը տեղի ունեցավ 2016 թ. հուլիսի 2-ին ՀՀ ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Գիտաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ ինչպես Պատմության ինստիտուտից (ՊԻ), այնպես էլ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից (ՇՀՀԿ), Գիտակրթական միջազգային կենտրոնից (ԳԿՄԿ), Վանաձորի պետական համալսարանից (ՎՊՀ), Մատենադարանից (ՄՄ), Հայաստանի ազգային արխիվից (ՀԱԱ):

Նստաշրջանի առաջին նիստում (նիստավար՝ ՊԻ գիտքարտուղար, պ. գ. թ., դոցենտ Հակոբ Մուրադյան) ընթերցվեցին Հայաստանի հին և միջնադարյան պատմությանը նվիրված գեկուցումներ՝ «Կուտումե-Կոտում բնակավայրը պատմամշակութային համատեքստում» (Հարություն Խուդանյան, ՊԻ), «Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հայեցակարգը Վանի թագավորության կազմավորման խնդրի շուրջ» (Վահե Սարգսյան, ՊԻ), «Թաղեոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում» (Վահե Թորոսյան, ՄՄ, ՊԻ), «Մարգարանական Հայաստանի կառավարման համակարգը» (Հենրիկ Խաչատրյան, ՊԻ), «Բագրատունիների վրացական ճյուղի սկզբնավորումը» (Լիանա Նազարյան, ՊԻ):

Նստաշրջանի երկրորդ և երրորդ նիստերում ներկայացվեցին Հայաստանի նոր շրջանի պատմությանը վերաբերող գեկուցումներ: Երկրորդ նիստում (նիստավար՝ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Մարիամ Գրիգորյան) ընթերցվեցին հետևյալ գեկուցումները՝ «XVI–XVIII դարերի օսմանյան հարկացուցակներն իբրև Հայաստանի պատմական ժողովրդագրության ուսումնասիրության սկզբնաղբյուր» (Արկադի Ակոպով, ՇՀՀԿ), «Շարիա դատարանների արձանագրությունները հալեպահայության մասին (ըստ Մաշտոցյան Մատենադարանի XVII–XIX դդ. արաբերեն վավերագրերի տվյալների)» (Վեներա Մակարյան, Սովսես Խեչո, ՄՄ), «Պետրոս Մադաթյանցի՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերը» (Արմինե Մելքոնյան, ՄՄ), «Հայկական հարցի արտացոլման ժանրային դրսևորումները Եգիպտոսի արաբալեզու մամուլում (XIX դարի վերջին քառորդ)» (Նարինե Երանոսյան, ՊԻ), իսկ երրորդ նիստում (նիստավար՝ ՊԻ Ընդհանուր պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Նարինե Երանոսյան)՝ «1890-ական թթ. գերմանական բարեգործական կազմակերպությունների կողմից արևմտահայերին ցուցաբերած օգնության պատմությունից» (Լիլիթ Քոսյան, ՊԻ), «Մատթեոս վար-

դասպետ Մատթևոսյանի զեկուցագիրը Վրացա-իմերեթական թեմի գործերի քննության մասին» (Վարդիթեր Գրիգորյան, ՊԻ, ՀԱԱ), «Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Կարսի մասնաճյուղի պատմությունից (1914 թ. նոյեմբեր – 1915 թ. փետրվար)» (Նինետա Ադամյան, ՊԻ), «Հայերի գորակոչն Օսմանյան կայսրությունում (1914–1918 թթ.)» (Աշխեն Բասենցյան, ՊԻ):

Հուլիսի 3-ին տեղի ունեցավ նստաշրջանի վերջին չորրորդ նիստը (նիստավար՝ ՊԻ Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պ. գ. թ., դոցենտ Համո Սուքիասյան), որի ընթացքում ընթերցվեցին Հայաստանի նորագույն պատմությանը վերաբերող զեկուցումներ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական գործունեությունը 1918–1920 թթ.» (Գայանե Ղազարյան, ՊԻ), «Խորհրդային Հայաստանի առօրեականության նկարագրությունները Լեո Կամսարի «Կրոնների պատմություն» և «Սարոտաժ» ֆելիետոններում» (Համո Սուքիասյան, ՊԻ, Գագիկ Ժամհարյան, ՎՊՀ), «Միգրացիոն ոլորտի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և Միգրացիայի միջազգային կազմակերպության գործունեությունը» (Վալյա Մարտիրոսյան, ԳԿՄԿ) և երկու հաղորդում՝ «2016 թ. աղբյուրաբան-դարաբանական պատերազմի անդրադարձները քրդական ռազմական և քաղաքական կառույցների հայտարարություններում» (Գոռ Երանյան, ՊԻ), «ԱՄՆ Կոնգրեսի բանաձևերը Հայոց ցեղասպանության վերաբերյալ» (Արմինե Սուրադյան, ՊԻ):

Չեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ գիտական աշխույժ բանավեճ, հարց ու պատասխան, իսկ վերջում՝ քննարկում և գիտական նստաշրջանի արդյունքների ամփոփում: Այնուհետև ելույթ ունեցան ՀՀ - ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխ. իսթ. տեղակալ, բ. գ. դ. Անուշավան Զաքարյանը, պ. գ. դ. Վահան Մելիքյանը, պ. գ. թ. Հակոբ Մուրադյանը, Գոհար Վարդումյանը, Գեղամ Հովհաննիսյանը, Համո Սուքիասյանը: Նրանք խոսեցին գիտական նստաշրջանից ստացած տպավորությունների մասին, կատարեցին առաջարկներ ու դիտողություններ՝ երիտասարդ գիտնականներին հորդորելով առավել ուշադրություն դարձնել զեկուցման վերլուծական կողմի վրա, կրճատել նկարագրական մասերը: Վերջում ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ. Կարեն Խաչատրյանն ամփոփեց նստաշրջանի արդյունքները և տեղեկացրեց, որ լավագույն զեկուցումները կհրատարակվեն Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի 2016 թ. 17-րդ համարում:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ